Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

«ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ, ք. Երևան, *28 հոկտեմբերի, 2026 թվականի*

ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ԵՎ ՑԱՆԿԻՑ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշտարարության մասին» օրենքով, «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի կանոնադրությամբ,

Նպատակ ունենալով ապահովել Կենտրոնի հաշտարարների ցանկի ձևավորման, համալրման և վարման միասնական ու թափանցիկ ընթացակարգերի ներդրումը, հաշտարարների ընտրության և ցանկում ընդգրկման համար օբյեկտիվ և միասնական մասնագիտական չափանիշների կիրառումը, ցանկում ընդգրկված հաշտարարների մասնագիտական պատրաստվածության, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, նրանց շարունակական մասնագիտական զարգացումը, ինչպես նաև հաշտարարական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը և հաշտարարության ինստիտուտի նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը՝

Հաշվի առնելով վերոգրյալի կապակցությամբ Կենտրոնի Հաշտարարության խորհրդատվական խորհրդի դիրքորոշումը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հաստատել «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի հաշտարարների ցանկում ընդգրկվելու և ցանկից հեռացվելու կարգը (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի
գլխավոր քարտուղարի 2026 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման

Կ Ա Ր Գ

«ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ԵՎ ՑԱՆԿԻՑ
ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կարգի կիրառման շրջանակը և կարգավորման առարկան

1. Կարգով սահմանվում են «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Կենտրոն) հաշտարարների ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ընդգրկվելու համար թեկնածուներին ներկայացվող պահանջները, լրացուցիչ մասնագիտական չափանիշները, Ցանկում ընդգրկվելու, Ցանկի վարման, ինչպես նաև հաշտարարներին Ցանկից հեռացնելու և Ցանկում վերականգնելու հիմքերն ու ընթացակարգը:

Հոդված 2. Կենտրոնի հաշտարարների ցանկը

1. Կենտրոնը վարում է հաշտարարների ցանկ, որը բաղկացած է երկու առանձին ենթացանկերից՝ նախատեսված ազգային հաշտարարների և միջազգային հաշտարարների համար:

2. Ցանկը կրում է խորհրդատվական բնույթ, և դրանում ընդգրկված լինելը Կենտրոնում գրանցված գործերով հաշտարարի առաջադրման, հաստատման կամ նշանակման պարտադիր նախապայման չէ:

3. Ցանկը ձևավորվում և համալրվում է Կենտրոնի Գլխավոր քարտուղարի որոշումների հիման վրա:

4. Ցանկի համալրումն իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով Կենտրոնի ընթացիկ գործունեությունը, հաշտարարության գործերի

քանակը, բնույթը և բարդությունը, տարբեր ոլորտներում մասնագիտացված հաշտարարների՝ ցանկում ներառելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Կենտրոնի ինստիտուցիոնալ զարգացման առաջնահերթությունները:

5. Ցանկում ընդգրկված լինելու հանգամանքն ինքնին չի երաշխավորում հաշտարարի նշանակումը կամ հաստատումը որևէ կոնկրետ գործով, ինչպես նաև Կենտրոնի համար չի առաջացնում նրան նվազագույն քանակի գործերով ներգրավելու պարտավորություն:

6. Ցանկը կարող է հրապարակվել Կենտրոնի պաշտոնական կայքում (www.amca.am)՝ ներառելով հաշտարարների մասնագիտական գործունեությանը վերաբերող տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 2. ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 3. Ցանկում ընդգրկվելու համար թեկնածուին ներկայացվող պահանջները

1. Կենտրոնի հաշտարարների ցանկի ազգային ենթացանկում ընդգրկվելու համար թեկնածուն պետք է՝

1) համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաշտարարի գործունեության իրականացման համար սահմանված պահանջներին.

2) ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված և գործող հաշտարարի որակավորման վկայագիր.

3) համապատասխանի սույն կարգի 4-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ մասնագիտական չափանիշներից առնվազն մեկին.

4) ունենա հաշտարարի մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ.

5) ունենա մասնագիտական բարի համբավ և պահպանի հաշտարարի վարքագծի կանոնները.

6) պատրաստակամ լինի հաշտարարության գործընթացներն իրականացնելու Կենտրոնի Հաշտարարության կանոններին և կիրառելի այլ ներքին իրավական ակտերին համապատասխան:

2. Կենտրոնի հաշտարարների ցանկի միջազգային ենթացանկում ներառվելու համար թեկնածուն պետք է համապատասխանի սույն հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված պահանջներին, ինչպես նաև ունենա հաշտարարի առնվազն

10 տարվա փորձառություն և առնվազն 20 միջազգային գործով հաշտարարության իրականացման փորձառություն:

3. Թեկնածուի՝ սույն հոդվածում նշված չափանիշներին համապատասխանությունը գնահատելիս կարող են հաշվի առնվել նաև նրա կրթությունը, մասնագիտացումը, շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված գործունեությունը, հաշտարարության գործընթացների մասնակցության փորձառությունը և մասնագիտական գործունեությանը վերաբերող այլ հանգամանքներ:

4. Թեկնածուն պարտավոր է Կենտրոնին ներկայացնել իրականությանը համապատասխանող, արժանահավատ և հնարավորինս ամբողջական տեղեկություններ իր մասնագիտական որակավորման, փորձառության և սույն կարգով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Հոդված 4. Լրացուցիչ մասնագիտական չափանիշները

1. Կենտրոնի հաշտարարների ցանկում ընդգրկվելու համար թեկնածուն պետք է համապատասխանի սույն հոդվածով սահմանված հետևյալ մասնագիտական չափանիշներից առնվազն մեկին՝

1) միջազգային մասնագիտական վերապատրաստում և/կամ որակավորում.

2) Կենտրոնի Հաշտարարության կանոնների կիրառմամբ հաշտարարության գործնական փորձառություն.

3) Կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական ուսուցում կամ որակավորման ստուգում:

2. Թեկնածուն համապատասխանում է միջազգային մասնագիտական վերապատրաստում և որակավորում ունենալու պահանջին, եթե վերջինս մասնակցել և հաջողությամբ ավարտել է հաշտարարության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող կազմակերպության կողմից իրականացված կամ ճանաչված մասնագիտական ուսուցման, վերապատրաստման կամ որակավորման ծրագիրը: Սույն չափանիշի իմաստով կարող են հաշվի առնվել, մասնավորապես, հետևյալ կազմակերպությունների կողմից իրականացված կամ ճանաչված համապատասխան ծրագրերը՝

№	Կազմակերպության անվանումը	Միջազգային անվանումը	Երկիր
1	Արբիտրների արտոնագրված ինստիտուտ	Chartered Institute of Arbitrators (CIArb)	Մեծ Բրիտանիա
2	Հոնկոնգի հաշտարարների հավատարմագրման ասոցիացիա	Hong Kong Mediation Accreditation Association Limited (HKMAAL)	Չինաստան (Հոնկոնգ)
3	Հաշտարարության միջազգային կամպուս	International Mediation Campus (IMC)	Գերմանիա
4	Լոնդոնի հաշտարարության դպրոց	London School of Mediation (LSM)	Մեծ Բրիտանիա
5	Հաշտարարության միջազգային ինստիտուտ	International Mediation Institute (IMI)	Նիդերլանդներ / ԵՄ
6	Սինգապուրի միջազգային հաշտարարության կենտրոն	Singapore International Mediation Centre (SIMC)	Սինգապուր
7	Վեճերի արդյունավետ լուծման կենտրոն	Centre for Effective Dispute Resolution (CEDR)	Մեծ Բրիտանիա
8	Հաշտարարների ընկերակցություն	The Society of Mediators (SoM)	Մեծ Բրիտանիա

3. Սույն հոդվածում չներառված միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների կողմից իրականացված կամ ճանաչված մասնագիտական ուսուցման, վերապատրաստման կամ որակավորման ծրագրերը ևս կարող են դիտարկվել թեկնածուի համապատասխանությունը գնահատելիս: Այդպիսի ծրագրերի համապատասխանությունը գնահատվում է՝ հաշվի առնելով ծրագիրն իրականացնող կազմակերպության մասնագիտական հեղինակությունը, ծրագրի բովանդակությունը, ծավալը, տևողությունը, գործնական բաղադրիչների առկայությունը, ինչպես նաև հաշտարարի մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված լինելը:

4. Հաշտարարության գործնական փորձառության չափանիշին համապատասխանում է այն թեկնածուն, ով Կենտրոնի Հաշտարարության կանոնների կիրառմամբ, որպես հաշտարար, իրականացրել է՝

1) առնվազն 20 պարտադիր հաշտարարության գործ, կամ

2) պարտադիր հաշտարարության շրջանակի մեջ չներառված քաղաքացիաիրավական բնույթի այլ վեճով առնվազն 1 հաշտարարության գործ:

Սույն մասի իմաստով հաշտարարության գործը համարվում է իրականացված, եթե թեկնածուն տվյալ գործով նշանակվել կամ հաստատվել է որպես հաշտարար և փաստացի իրականացրել է հաշտարարություն:

5. Կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական ուսուցում կամ որակավորման ստուգում անցած լինելու չափանիշին համապատասխանում է այն թեկնածուն, ով՝

1) մասնակցել և հաջողությամբ ավարտել է Կենտրոնի կողմից կազմակերպված՝ առնվազն 10 ժամ ընդհանուր տևողությամբ մասնագիտական ուսուցման կամ վերապատրաստման դասընթացները, կամ

2) հաջողությամբ անցել է Կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական որակավորման ստուգումը, որը ներառում է գրավոր և բանավոր քննության փուլեր:

ԳԼՈՒԽ 3. ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 5. Ցանկում ընդգրկվելու վերաբերյալ դիմումը

1. Կենտրոնի հաշտարարների ցանկում ընդգրկվելու համար Կենտրոնի քարտուղարություն է ներկայացվում համապատասխան դիմում: Այն կարող է ներկայացվել Կենտրոնի կողմից հաստատված դիմումի ձևաթղթով՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

2. Դիմումում նշվում են թեկնածուի անձնական և մասնագիտական տվյալները, մասնագիտական որակավորումը, աշխատանքային փորձառությունը, մասնագիտացման ոլորտները, ինչպես նաև սույն կարգով նախատեսված լրացուցիչ մասնագիտական չափանիշներին համապատասխանության վերաբերյալ տեղեկությունները:

3. Դիմումին կից ներկայացվում են՝

1) թեկնածուի ինքնակենսագրականը կամ մասնագիտական կենսագրությունը.

2) Հաշտարարի որակավորման վկայագրի պատճենը՝ բացառությամբ միջազգային հաշտարարների.

3) բարձրագույն կրթությունը և որակավորումը հավաստող փաստաթղթերը.

4) սույն կարգի 4-րդ հոդվածով նախատեսված համապատասխան մասնագիտական չափանիշին բավարարելը հաստատող փաստաթղթերը,

5) թեկնածուի մասնագիտական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթեր, որոնք նա անհրաժեշտ է համարում ներկայացնել:

4. Թեկնածուն կարող է ներկայացնել նաև երաշխավորագրեր, մասնագիտական բնութագրեր, լրացուցիչ հավաստագրեր և այլ նյութեր, որոնք, նրա գնահատմամբ, կարող են նշանակություն ունենալ Ցանկում ընդգրկվելու հարցի քննարկման համար:

5. Դիմումի ներկայացմամբ թեկնածուն հաստատում է ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը և համաձայնում, որ Կենտրոնը դրանք օգտագործի դիմումի ուսումնասիրության ու Ցանկում ներառելու համապատասխանության գնահատման նպատակով:

Հոդված 6. Դիմումի ընդունումը և ուսումնասիրությունը

1. Կենտրոնի հաշտարարների ցանկում ընդգրկվելու վերաբերյալ դիմումների ընդունումը և ուսումնասիրությունն իրականացնում է Կենտրոնի քարտուղարությունը երկամսյա ժամկետում, անհրաժեշտության դեպքում, նշված ժամկետը կարող է երկարաձգվել ևս երկու ամսով:

2. Եթե ներկայացված դիմումը կամ կից փաստաթղթերը թերի են, Կենտրոնի քարտուղարությունը կարող է առաջարկել թեկնածուին լրացնել բացակայող տեղեկությունները կամ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Կենտրոնի քարտուղարությունը կարող է թեկնածուից պահանջել պարզաբանումներ, եթե ներկայացված տեղեկությունները հակասական են, ոչ ամբողջական կամ դրանց հիման վրա հնարավոր չէ գնահատել թեկնածուի համապատասխանությունը սահմանված պահանջներին:

4. Դիմումի ուսումնասիրության ավարտից հետո Կենտրոնի քարտուղարությունը համապատասխան նյութերը ներկայացնում է Կենտրոնի Գլխավոր քարտուղարին՝ հետագա գնահատման և որոշում կայացնելու համար:

Հոդված 7. Թեկնածուի գնահատումը

1. Թեկնածուի գնահատումն իրականացվում է նրա ներկայացրած փաստաթղթերի, Կենտրոնի տիրապետության տակ գտնվող տեղեկությունների և անհրաժեշտության դեպքում իրականացված լրացուցիչ ուսումնասիրությունների հիման վրա:

2. Անհրաժեշտության դեպքում թեկնածուի հետ կարող է անցկացվել հարցազրույց՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու և առանձին հարցեր պարզաբանելու նպատակով:

3. Կենտրոնի Գլխավոր քարտուղարը թեկնածուի դիմումի քննարկման շրջանակներում կարող է դիմել Կենտրոնի Հաշտարարության խորհրդատվական խորհրդին վերջինիս կարծիքը ստանալու համար:

Հոդված 8. Հաշտարարների ցանկում ընդգրկվելու վերաբերյալ որոշումը

1. Կենտրոնի հաշտարարների ցանկում ընդգրկվելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Կենտրոնի Գլխավոր քարտուղարի կողմից՝ Կենտրոնի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված իրավասությունների շրջանակում:

2. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) թեկնածուին Կենտրոնի հաշտարարների ցանկում ընդգրկելու մասին.

2) թեկնածուի դիմումը մերժելու մասին:

3. Թեկնածուի՝ Ցանկում ընդգրկելու վերաբերյալ որոշումը հիմք է հանդիսանում Կենտրոնի քարտուղարության կողմից համապատասխան գրանցում և հրապարակում կատարելու համար:

4. Կենտրոնի քարտուղարությունը թեկնածուին տեղեկացնում է ընդունված որոշման մասին՝ որոշման ընդունումից հետո մինչև յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 9. Դիմումի մերժումը և կրկին դիմելու իրավունքը

1. Թեկնածուի դիմումը մերժվում է, եթե՝

1) թեկնածուն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաշտարարի գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պահանջներին.

2) թեկնածուն չի համապատասխանում սույն կարգով նախատեսված լրացուցիչ մասնագիտական չափանիշներից որևէ մեկին.

3) թեկնածուն չի ներկայացրել համապատասխանությունը գնահատելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ տեղեկությունները, և առկա նյութերի հիման վրա հնարավոր չէ հաստատել համապատասխան պահանջների կատարումը.

4) թեկնածուի ներկայացրած տեղեկությունների կամ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ կամ դրանց արժանահավատության վերաբերյալ հիմնավոր կասկածներ.

5) թեկնածուի Ցանկում ընդգրկումը տվյալ ժամանակահատվածում չի բխում Կենտրոնի ինստիտուցիոնալ կամ գործառնական կարիքներից:

2. Դիմումի մերժումը չի սահմանափակում թեկնածուի՝ Կենտրոնի հաշտարարների ցանկում ընդգրկվելու համար կրկին դիմելու իրավունքը՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:

3. Թեկնածուն կարող է նոր դիմում ներկայացնել մերժման մասին ծանուցումն ստանալու օրվանից ոչ շուտ, քան վեց ամիս անց, եթե դիմումը մերժվել է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով: Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերով դիմումի մերժման դեպքում թեկնածուն կարող է նոր դիմում ներկայացնել, երբ մերժման հիմք հանդիսացած անհամապատասխանությունը վերացված է:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հոդված 10. Հաշտարարների ցանկի վարումը

1. Հաշտարարների ցանկի վարումն իրականացնում է Կենտրոնի քարտուղարությունը:

2. Ցանկում ընդգրկված հաշտարարների վերաբերյալ կարող են հաշվառվել, մասնավորապես, հետևյալ տեղեկությունները՝

1) հաշտարարի անունը, ազգանունը և հայրանունը.

2) հաշտարարի որակավորման վկայագրի համարը.

3) մասնագիտական կրթությունը և որակավորումը.

4) մասնագիտացման ոլորտները.

5) մասնագիտական փորձառությունը.

6) հաշտարարության իրականացման լեզուները.

7) մասնագիտական վերապատրաստումների և որակավորման ծրագրերի վերաբերյալ տեղեկությունները.

8) Կենտրոնի հետ համագործակցության համար անհրաժեշտ կապի տվյալները.

9) Կենտրոնի կողմից անհրաժեշտ համարվող այլ մասնագիտական տեղեկությունները:

3. Կենտրոնի քարտուղարությունն ապահովում է Ցանկում ընդգրկված տեղեկությունների ժամանակին թարմացումը:

4. Հաշտարարը պարտավոր է Կենտրոնին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ցանկում ներառված տեղեկություններում փոփոխություն կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին:

5. Ցանկում ընդգրկված անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների ծավալը սահմանվում է Կենտրոնի կողմից՝ հաշվի առնելով կիրառելի օրենսդրության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ պահանջները:

Հոդված 11. Ցանկում ընդգրկված հաշտարարի պարտականությունները

1. Ցանկում ընդգրկված հաշտարարը պարտավոր է իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կենտրոնի Հաշտարարության կանոններին, Կենտրոնի հաշտարարների վարքագծի կանոնագրքին համապատասխան:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՏԱՐԱՐԻՆ ՑԱՆԿԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 12. Հաշտարարին Ցանկից հեռացնելու հիմքերը

1. Ցանկում ընդգրկված հաշտարարը կարող է հեռացվել Ցանկից սույն կարգով նախատեսված հիմքերով և ընթացակարգով:

2. Հաշտարարին Ցանկից հեռացնելու հիմքերն են՝

1) հաշտարարի գրավոր դիմումը.

2) հաշտարարի մահը.

3) արտոնագրված հաշտարարի որակավորումը դադարեցնելը կամ գործունեությունը կասեցնելը՝ բացառությամբ միջազգային հաշտարարների.

4) Կենտրոնի Հաշտարարության կանոնների, հաշտարարների վարքագծի կանոնագրքի դրույթների խախտումները.

5) երբ հաշտարարների ցանկում ներառվելուց հետո պարզվում է, որ այդ ցանկում ընդգրկվելու համար թեկնածուն ներկայացրել է իրականությանը

չհամապատասխանող, կեղծ կամ մոլորեցնող տեղեկություններ, կեղծված կամ խարդախությամբ ստացված փաստաթղթեր, կամ այլ կերպ դրսևորել է մոլորեցնող վարքագիծ.

6) հաստատվել է հաշտարարի կողմից վարքագծի կանոնների խախտում, կոռուպցիոն բնույթի արարք, խարդախություն կամ էթիկայի խախտում, որն անհամատեղելի է նրա բարեվարքության հետ.

7) հաշտարարի կողմից իր պարտականությունների կատարումն անհնարին դարձնող օբյեկտիվ հանգամանքների առաջացումը.

8) սույն կարգով կամ Կենտրոնի այլ կիրառելի ներքին իրավական ակտերով ուղղակիորեն սահմանված՝ հաշտարարի մասնագիտական գործունեության կամ Կենտրոնի հետ համագործակցության հետ կապված այլ էական հիմքերը:

3. Հաշտարարին Ցանկից հեռացնելու հիմքերի առկայությունը գնահատելիս հաշվի են առնվում համապատասխան հանգամանքների բնույթը, ծանրությունը, առաջացման պատճառներն ու հետևանքները, Կենտրոնի բարի համբավի և հաշտարարության նկատմամբ հանրային վստահության վրա դրանց ազդեցությունը, ինչպես նաև հետագա համագործակցության հնարավորությունը:

4. Հաշտարարին Ցանկից հեռացնելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Կենտրոնի Գլխավոր քարտուղարի կողմից՝ Կենտրոնի Հաշտարարության խորհրդատվական խորհրդի հետ քննարկումների հիման վրա:

Հոդված 13. Ցանկից հեռացնելու հարցի քննարկումը

1. Հաշտարարին Ցանկից հեռացնելու հարցի քննարկումը կարող է նախաձեռնվել՝

1) Կենտրոնի Գլխավոր քարտուղարի նախաձեռնությամբ.

2) Կենտրոնի Հաշտարարության խորհրդատվական խորհրդի կամ դրա անդամի առաջարկությամբ.

3) Հաշտարարի գրավոր հաղորդման հիման վրա, եթե վերջինս համահաշտարարության իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների կամ անձամբ արձանագրած հանգամանքների հիման վրա հիմնավոր կասկածներ ունի տվյալ հաշտարարի՝ սահմանված մասնագիտական, վարքագծային պահանջների համապատասխանության վերաբերյալ.

4) հաշտարարության գործով կողմի (լիազոր ներկայացուցչի) կամ կողմերի համատեղ դիմումի կամ բողոքի հիման վրա.

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կամ հաշտարարների մասնագիտական գործունեության նկատմամբ օրենքով սահմանված վերահսկողական կամ կարգապահական լիազորություններ իրականացնող իրավասու մարմնի պաշտոնական հաղորդման, որոշման կամ այլ փաստաթղթի հիման վրա.

6) դատական կամ այլ իրավասու պետական մարմնի կողմից իր լիազորությունների իրականացման ընթացքում բացահայտված հանգամանքների վերաբերյալ Կենտրոնին ներկայացված կամ օրենքով սահմանված կարգով հրապարակված պաշտոնական տեղեկության հիման վրա.

7) ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներկայացված դիմումի կամ բողոքի հիման վրա, եթե դրանում նշված հանգամանքներն առերևույթ վկայում են սույն կարգով նախատեսված՝ Ցանկից հեռացնելու հիմքերի հնարավոր առկայության մասին:

2. Ցանկից հեռացնելու հարցի քննարկման համար հիմք կարող են հանդիսանալ նաև Կենտրոնի տիրապետության տակ գտնվող փաստաթղթերը, համապատասխան անձանց ներկայացրած բողոքները կամ այլ արժանահավատ տվյալներ:

3. Սույն հոդվածով նախատեսված հարցի քննարկման համար հաշտարարին կարող է առաջարկվել ներկայացնել գրավոր դիրքորոշում՝ Կենտրոնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում: Կենտրոնի Գլխավոր քարտուղարը կարող է որոշել հաշտարարի մասնակցությամբ լսումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

4. Հաշտարարի կողմից բացատրություններ չներկայացնելը չի խոչընդոտում հարցի քննությանը, եթե նրան պատշաճ հնարավորություն է ընձեռվել ներկայացնելու իր դիրքորոշումը:

5. Հաշտարարին Ցանկից հեռացնելու հարցի քննարկման ընթացքում Կենտրոնի Գլխավոր քարտուղարը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, համապատասխան փաստաթղթեր կամ մասնագիտական կարծիքներ:

6. Հարցի քննարկման արդյունքներով Կենտրոնի Գլխավոր քարտուղարն ընդունում է որոշում՝

1) հաշտարարին Ցանկից հեռացնելու մասին.

2) հաշտարարին Ցանկից ժամանակավորապես հեռացնելու մասին.

3) հաշտարարին Ցանկից հեռացնելու հարցի քննարկումն ավարտելու մասին՝ հեռացման հիմքերի բացակայության պատճառով:

7. Ընդունված որոշման մասին հաշտարարը տեղեկացվում է որոշումն ընդունելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 14. Հաշտարարին Ցանկից ժամանակավորապես հեռացնելը և Ցանկում վերականգնելը

1. Եթե հաշտարարին Ցանկից հեռացնելու հիմքերը հիմնավորված են, Կենտրոնի Գլխավոր քարտուղարը կարող է, հաշվի առնելով հանգամանքների բնույթը և (կամ) խախտումների ծանրությունը, Կենտրոնի Հաշտարարության խորհրդատվական խորհրդի հետ քննարկումների հիման վրա որոշում ընդունել հաշտարարին Ցանկից ժամանակավորապես հեռացնելու մասին:

2. Ժամանակավոր հեռացման ընթացքում հաշտարարը չի դիտարկվում Կենտրոնի նախաձեռնությամբ նոր գործերով նշանակման համար: Սույն դրույթը չի սահմանափակում կողմերի՝ օրենքով և Կենտրոնի Հաշտարարության կանոններով նախատեսված կարգով հաշտարար առաջադրելու իրավունքը:

3. Ժամանակավոր հեռացումը ինքնին չի դադարեցնում արդեն ընթացքի մեջ գտնվող հաշտարարության գործով հաշտարարի լիազորությունները: Այդ հարցը լուծվում է յուրաքանչյուր գործով առանձին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Կենտրոնի Հաշտարարության կանոններին համապատասխան:

4. Ցանկից ժամանակավորապես հեռացված հաշտարարը վերականգնվում է Ցանկում Կենտրոնի Գլխավոր քարտուղարի որոշմամբ՝ Հաշտարարության խորհրդատվական խորհրդի հետ քննարկումների հիման վրա:

5. Հաշտարարի վերականգնումը Ցանկում հնարավոր է ժամանակավորապես հեռացնելու մասին որոշմամբ սահմանված մեկ կամ մի քանի պայմանների կատարման դեպքում, այդ թվում՝

1) հաշտարարը հաջողությամբ ավարտել է համապատասխան մասնագիտական վերապատրաստումը.

2) վերացել են հաշտարարին Ցանկից ժամանակավորապես հեռացնելու հիմք հանդիսացած հանգամանքները.

3) կատարվել են Կենտրոնի Գլխավոր քարտուղարի որոշմամբ նախատեսված այլ պայմանները:

ԳԼՈՒԽ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 15. Գործող հաշտարարների համապատասխանության գնահատումը

1. Կարգն ուժի մեջ մտնելու պահին ազգային ենթացանկում ընդգրկված հաշտարարների՝ սույն կարգի 4-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ մասնագիտական չափանիշներին համապատասխանությունը գնահատվում է Կենտրոնի քարտուղարության կողմից՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում: Սույն դրույթը չի տարածվում միջազգային հաշտարարների նկատմամբ:

2. Եթե սույն կարգի ընդունման պահին Կենտրոնի կողմից վարվող հաշտարարների ցանկում ընդգրկված ազգային հաշտարարը չի համապատասխանում սույն կարգի 4-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ մասնագիտական չափանիշներից որևէ մեկին, Կենտրոնը նրան գրավոր տեղեկացնում է անհամապատասխանության մասին և վերջինիս խնդրանքով կարող է տրամադրել որոշակի ժամկետ՝ համապատասխանության ապահովման համար:

3. Եթե հաշտարարը չի ներկայացրել համապատասխանության ապահովման համար լրացուցիչ ժամկետ տրամադրելու խնդրանք կամ սահմանված ժամկետում չի ապահովել սահմանված չափանիշներին համապատասխանությունը, վերջինս հեռացվում է Ցանկից:

Հոդված 16. Տեղեկությունների գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

1. Սույն կարգի կիրառման ընթացքում ստացված անձնական և մասնագիտական տեղեկությունները մշակվում ու օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

2. Կենտրոնը կարող է պահպանել թեկնածուների ներկայացրած դիմումները, փաստաթղթերը և գնահատման արդյունքները՝ իր գործունեության կազմակերպման, Ցանկի վարման և համապատասխան որոշումների փաստաթղթավորման նպատակով:

3. Թեկնածուի համապատասխանության գնահատման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները չեն կարող օգտագործվել սույն կարգի նպատակների հետ անհամատեղելի նպատակներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: